



ԲԱԶՄԱՎԵՊ

ԺԹ ՏԱՐԻ, ԹԻՒ 40

1861

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1

Ա. ՌԱԿԱԽՈՍ ՍԵՐՈՎ. ԲԷՆ
Ժառագաղիմորթիւն:

Ո՞թէ այսափ ծանօթութիւններ, այսափ արհեստներ ու գիտութիւններ մարդու մէկին ձեռք ձգեց : Այլ այն պիսի ձիրքով մըզոր Ռատուած իրեն միայն տուած է . որ է՝ յառաջադիմելու կարողութիւն : Խնչուան հիմա մեզուները դեռ Շամաս ժամանակուան պէս բջիջնին կը շննեն . թուզուններն ալ լոյայ տապանին մէջ մնանկ հիւսած են իրենց բոյները՝ ինչ որ կը տեսնես այս օրուան օրս քու կամարակապներուդ և ցանկերուդ վրայ : Ինդհակառակին մարդը ոտն առ ոտն կատարելագործեց իր արհեստները : Ո՞քափ ատեն կեցաւ առանց կերակուրներն աղելու և հացը խմորելու : Օ անց կ'ընեմ յիշելու ժապաւէն ու կտաւ հիւսելը, գուլպայ :

1 . Գուլբէլման Լէա հնարեց 1589ին գուլպայ հիւսելու կերպը : Սկսվիոյ Յակոբ առաջնոյն նամակներն մէկը ունինք , որուն մէջ թագաւորը

զլսարկ և հողաթափ շինելը : Հռովմայեցիք որ այնչափ անուն ձգած են պատմութեան մէջ, ոչ պատուհաններուն ապակի կը դնէին , ոչ ակնոց կը ժանճային¹, ոչ ծխան , ոչ բիւրեղեայ հայի , ոչ ասպանգակ ձի հեծնելու , ոչ նամակատուն , և ոչ իսկ կտաւէ շապիկ : 1400 տարի առաջ շերամին ինչ ըլլալը չէր գիտցուեր , և մետաքսը ոսկիի կշուքով կը ծախտուեր². Հազիւ 700 տարի կայ որ Խոտալիոյ մէջ կը մշակուի և հոնտեղի մէծ հարստութիւնն է :

Պար կոմին կ'աղաչէ որ իր մետաքսեայ գուլպաները փոխ տայ , որպէս զի կարենայ վայելուչ կերպով ընդունիլ Սպանիոյ գեսպանը :

1 . Կ'ըսեն թէ Սալվինոյ Արմագոյ վլորենտիացին , որ 1317ին մեռաւ , Ճարտարեց ակնոցը :

2 . Հռովմայեցի կայսերաց մէկը յանդիմանեց իր կինը՝ մետաքսէ զգեստ մը շննել տալուն համար ըստով որ շատ սուզի կը նսաի : Զինաստան շերամներն իրենց բժոքները բացօղեայ տեղ կը շննեն . ուսկից երկու կրօնաւորներ իրենց եղեգնեայ գաւաղանին մէջ դրած քիչ մը սերմ բերին . և հիմա անկէ սերած են բոլոր Եւրոպայի շերամները : 1130ին սկսաւ Սիկիլիոյ մէջ ծաղկիլ մետաքսի առուտուրը :

Կախնիք ժամացոյց չեին գիտեր, և առջինը 1345ին Խտալիա Շատուայի աշտարակին վրայ դրուեցաւ Խնտոնիոս Տօնտիի ձեռքով։ Ո՞եր հարցն օրերը պատուհաններուն վանդակափեղկ չեր դրուեր, և ասոնց նման ուրիշ հիմակուան դիւրութիւնները չկային։ Տես թէ ինչպէս ամէն բան առաջ կ'երթայ։

Այսոր պատճառը՝ վասն զի ամէն տեղւոյ մարդիկը մէկ ընտանիք մը կը կազմեն, որ հետզհետէ իւրաքանչիւրին հընարած գիւտովը կը զարգանայ։ Ո՞արդկային ազգը կրնաս իբրև առանձին անհատ մը մտածել, որ որչափ տարիքով հասուննայ, այնչափ բան կը սորվի և լաւ կ'ապրի։ Ո՞եր ծերերուն գիտցածները զիտնալինենէս զատ՝ գիտենք նաև իրենցմէ վերջը Ճարտարուած բաները։ մեր զաւկըները մեզմէ աւելին պիտի զիտնան, և յուսանք որ շատ ալ գերազանցեն։

Այս յառաջադիմութիւնը ամէն բանի մէջ կ'երեւայ։ Բայց Ճաշակ մը տալու համար թէ ինչպէս արհեստները էրթալով կը բարկընան, ցուցընեմքեղի մարդկանց մէջ հաղորդակցութեան կերպերուն զարգացումը։ Ո՞րչափ որ մարդիկ առանձնացեալ ասրին, այնչափ անասնոց կը մօտենան։ իսկ որչափ միանան՝ այնչափ աւելի թէ իրենք զիրենք և թէ զուրիշները կը Ճանչնան, կը սիրեն զիրար և իրարու կարեկից կ'ըլլան, աւելի բան կը սորվին, մէկդի կը ձգեն կանխսակալ դատմունքները և յամուռութիւնը։ և մէկուն գըտած գիւտը միշտ ամէն տեղ ամենուն կը ծառայէ։

Ուրեմն կը կարօտին մարդիկ փոփոխակի հաղորդել իրարու իրենց մտածութիւնները, ծանօթութիւնները և ունեցածները։ և աս բանիս համար հարկաւոր են նախ շոգեշարժ մեքենաները, երկրորդ՝ զիրը։

ԺԲ.

Գիր.

Ակզրան մարդիկ իրենց գաղափարները տղայոց և տգիտաց պէս խօսքով միայն կրնային իրարու հաղորդել։ Հետեւաթար չեին ալ կրնար հեռու տեղը լուր զրկել և առնուլ, և ոչ իսկ իրենց մտածութիւններն ու գիւտերը աւանդել ապագայից։ Աղան ոմանք որ խօսքերը նշաններով ացքին առջեւը հանել սորվեցուցին, և մոտածելով մտածելով գտան որ բոլոր լեզուաց¹ անհամար բառերը մօտ հինգ հնչմունքներէ և անհինգ հնչմանց քանան զուգագրութիւններէ բաղկացած են². ուստի նշաններ հնարեցին ան հնչմունքները բացատրելու, որք են ձայնաւորները, իսկ զուգագրութիւնքն են՝ բաղաձայնք. և աս քանի մը տառերով կրցան բացատրել բովանդակ խօսքերը և բոլոր ծնած և ծընելիք մտածութիւնները։

Չինացիք մեր այթութենին 38 նշանագիրներուն տեղ ունին 80,000. անոր համար մեր ամէն գիրերը քիչ օրուան մէջ դու կը սորվիս, իսկ անոնցը բոլոր մարդուս կեանքը պէտք է. ասկէ է որ քիչ հոգի տեղեակ են Չինաց լեզուին։ Մասնց գիրը վերէն վար կ'երթայ։ իսկ չըկեցն՝ աջէն ձախ։ Ուրիշ ազգեր հնարեցին, մէկենական բառերը, որոնք էին ձևեր, գծեր, քառակուսիներ, քաշուածքներ, բայց կարդալը շատ խրթին։ Մասնկ են Ազգիպտոսի բրգանց վրայի դրոշմուածները։ Բայց այթութենին այս պարզ գիւտը անանկ գերազանց ու զար-

1. Ծանօթ լեզուները մօտ 2000 են, իսկ գաւառականները թերեւ 10,000. Եւրոպայի մէջ 53 լեզու կը խօսուի։

2. Հեղինակը լատին այթութենին 24 նշանագիրներովն հաշիւ ընկելով կը գտնէ որ իւրաքանչիւր տառը նախ մէյմէկ, վերջը երկերկու, երեք երկք. և ասանկ շարունակաբար, քովէ քով դրուելով. 1. 391, 724, 288, 887, 252, 999, 425, 128, 493, 402, 200 զուգագրութիւն կ'ելք։ Ո՞րչափ ևս առաւել կրնան մեր 38 նշանագիրները զուգագրութիւններ հանել։

մանալի է քան զայլս , որ անհնարին կ'երևայ մարդու գիւտ կարծել . հասա թէ Աստուած սորվեցուցած ըլլայ , ինչ պէս խօսիլը սորվեցուց :

Ի՞շի բերան սրածայր երկաթով մը մետաղէ , տախտակէ կամ քարէ պնակիտներու վրայ կը գրէին , որ թէ տարժանելի էր և թէ շատ բան չէր կրնար գրուիլ : Եթե մտածեցին ոչխարի մորթ կամ մագալաթ գործածել , արմաւի տերե , ու եգիպտական տեսոկ մը պրատու ըսուած եղեգին կեղել : Իսայա այս պըր տուեայ թուղթը շատ սուզի կը նստէր և քիչ հոգի կրնային զայն ստանալ :

Քրիստոսէ հազար տարի վերջը , սկսան բամբակէ թուղթ շինել . յետոյ 1100^ն Իսատուայի մէջ հնարուեցաւ մեր հիմակուան գործածածը , զոր ասանկ կը շինեն : Ալ ժողվեն կտափի ցնցոտիներ , կը լուան , կը թրմեն , առնդի մէջ կը տեղաւորեն , ուր անդադար քանի մը սանգիտուունք ջրին զօրութեամբը շարժելով կը ծեծեն լաթերը , որ խիւսի պէս բան մը կը դառնան : Այս խիւսը կը դնեն տաք ջրով տաշտի մը մէջ . յետոյ մէկը քիչ մը ան խիւսէն առնելով , կը լեցընէ կաղապարին մէջ , որ փայտէ է , յատակն ալ արուրէ թելերով՝ մազի նման . ջուրը կը վազէ , և մնացած նիւթը թղթի թերթ կը ձեւանայ :

Այս թերթերը կը ժողվեն ու չուխայի կամ թաղիքի վրայ կը տարածեն , վերջը մամուլի տակ կը ճզմեն պնդացընելու և բարակցնելու համար : Չորսական ետքը որպէս զի չպտղի՝ կաշիի կտորնելով եռացած ջուրի մը մէջ կը խոթեն . վերջը դուրս կը հանեն , կը չորցընեն , ու կը յղիէն , և թերթ թերթ ծալած կը ծախտէն :

Դմացար ուրեմն , ազնիւ պատանեակ , ցնցոտիներով այս գեղեցիկ թուղթը կը շինուի : Անոր համար կ'ըսէր առակախոս Աերութէն որ ամէնէն իւղանիւնն ալ բանի իրայ գալ և ամէնէն իւղան մարդէն ալ իրայ բան սորչուիլ :

Հին ատեն պղտի եղէքներ գոյներու մէջ թաթիւնելով ամսանկ կը գրէին . մենք

1 Բար. Papiro.

կը գործածենք թանաք և փետուր :

Այսանկով գրելը դիւրացաւ . բայց ամէն զիրք պէտք էր ձեռքով օրինակել : Բսենք թէ յիսուն աշակերտ ժողուած ենք հոս . հիմա այս կարգացած զլքեր նիս ունենալու համար , պէսք էր որ ամենքնիս օրինակէինք , և զիտէք թէ ինչ ձանձրութեամբ և որչափ ատեն կորսնցընելով : 500 տարի առաջ զիրք մը սակաւագիւտ բան մը ըսել էր , և այնչափ օգտակար ու գեղեցիկ տեղեկութիւններ քիչ հոգի կը վայլէին :

Այս պակասութիւնս ալ տաղագրութիւնը լեցուց : Կյել մը կապարէտ ա. բ. գ. , և այն , տառերը թափեցին , որոնք իւրաքանչիւր զատ զատ խորշերու մէջ կը պահուին : Գրաշարը մէկիկ մէկիկ կ'առնէ այս գրերէին , և անսնցմէ կը կազմէ բառերը , բառերով առղերը , զօրոնք տակէ տակ շարելով երես կը ձեւացընէ : Երբոր երեսները շատնան ու սիսաններն ուղղուին , շիտակ տեղույ մը վրայ կը շարին , և գլանով մը եղուտ թանաք քսելէն վերջը թաց թերթ մը վրան կը դնեն ու մամուլով կը ճզմեն , որպէս զի զիրերը տպուին : Այս տաեն տպած թերթն հանելով և գրերուն նորէն թանաք քսելով երկրորդ մը կը տպեն , նոյնպէս հետզհետէ որչափ օրինակ որ կ'ուզեն ան գրուածքէն կը հանեն , և փուելէն , չորցընելէն ու ծալլելէն ետքը ան թերթերը գիրք կը կազմեն . իսկ նշանագիրները քակելով գարձեալ իրենց խորշերը կը ցրուեն ուրիշ ատենուան համար : Եւ ասանկ քիչ ժամանակուան մէջ և նուազ ծախքով կը շատոցընեն զրուածքի մը օրինակները , և կարեսը ծանօթութիւնները կը տարածեն ամէն տեղ :

Այս հրաշալի գիւտս Հովհաննէս կուգեմանկէրկ գերմանացին հնարեց 1440^ն , հանդերձիր Վասուսդ և Շէօֆ Փէր ընկերներովը : Խտալիա 1467^ն մտաւ տպազրութիւնը և ուրիշ արհեստներուն պէս կամաց կամաց կատարելութեան հասաւ : Կան հիմա անսանկ մամուլներ որոնք վայրիկենի մը մէջ 300 երես կը տպին : Քանի հոգի և քամի

տալի պէտք էր այսցափ գիրք օրինակելու համար : Աւրեմն աղեկ կ'ըսէր առակախօս Աւրովսէն թէ՝ անչն բան յուսաւը է և ամենայն ինչ յուսաւը է ժամանակէն , Տարդիներէն և ինքն իրմէն :

Կը շարունակուի :

Ծաղիկ :

Ի՞ուսաթանք ծաղիկ անունը այն տունկերուն միայն կը մանմաւորեն որոնք իրենց ծաղկին գեղեցկութեանը համար կը մշակուին , և զարդ և վայելքութիւն են պարտեզներու , ինչպէս մեխակը , կակաջը , հրանունկը , անեմնը և այլն : Խւրոպա 'ի բնէ շատ աղքատ է գեղեցիկ ծաղկլներու կողմանէ , բաց ի մեխակէն որ Խտալիոյ յատուկ ծաղիկն է . իսկ հրանունկը , անեմնը , յակնթիքազմաթիւ տեսակները , նարկիզն ու շուշանը արևելքէն բերուած բոյսեր են , բայց արհեստով Խւրոպաիոյ մէջ հիմա կրկնապատիկ աւելի գեղեցկացած են :

Վմէն ծաղիկ իրեն առանձին հունտն ունի , ուսկից կը ձեանայ իր ցողունը : Վայս ցողունները կամ արմատէ և կամ սոխէ կը սկսին առնուլ իրենց աճումը , որով ծաղիկները գլխաւորապէս երկու կը բաժնուին . մէյմը արմատէ առաջ եկածները , մէյմն ալ սոխէ :

Դշաղիկները բազմացրնելու տեսակ տեսակ կերպեր կան , ինչպէս սոխով , մատաղատունկով , հատմամբ , պատուաստով : Խւրովչետե երկայն կ'ըլլայ ամէն ծաղիկ իրեն հունտովն աճեցրնելը , անոր համար այս բանիս այլ և այլ միջոցներ կան . հոս խօսինք նախ ծաղիկ մը հունտէ առաջ բերելու կերպին վրայ :

Վայն ամէն հունտերէն որ ձմեռը կը դիմանան , ումանք մասնաւոր ածուի մը մէջ կը տնկուին միատեղ , որպէս զի չափաւորապէս մեծնալէն ետե ուրիշ տեղ փոխադրուին , ումանք ալ՝ որովչետե ամենադժուարին և կամ անկարելի է

տեղափոխելը՝ անոր համար իրենց յատուկ տեղերը կը տնկուին : Ովորաբար պարտիզպանները այս չորս ամիսներուս մէջ կը տնկեն ծաղկի հունտերը , այսինքն փետրուար , մարտ , ապրիլ , մայիս . բայց կան ալ որ բոլոր տարին կրնան տնկուիլ :

Հունտեր տնկելու ածուին մէջ նախ լաւ պարարտութիւն դնելու է՝ վրան կէս ոտնաչափ բարձրութեամբ լաւ մաքրուած պարարտ հին հող . ութը կամ տասը օր ետքը երբոր այս ածուն կը պատրաստուի , և արեւու ջերմութեաստութիւնը կ'անցնի , ան ատեն կը բնան հունտերը ցանուիլ՝ իւրաքանչիւր տեսակը առանձին առանձին որոշելով . ետքը բթաչափ մը թանձրութեամբ հողով ծածկելու է , և մանրամազ ցընցուղով մը ոռոգել ստէալ՝ եթէ հողը չորնալու ըլլայ : Հունտերը քիչ մը մեծնալէն ետե կրնայ մեծ ցնցուղով ալ ոռոգուիլ , ու թէ որ ջրին առատութեանէն հողէն դուրս ելլեն մատղաշ ծլիկներուն արմատները , քիչ մը հողով վրանին նորէն ծածկելու է : Ինէ որ եղանակը առաջ գնացած է ու վախ ըլլայ որ ցուրտ գիշերները վնաս մը բերեն , ան ատեն պէտք է վրանին ծածկել : Վայդ ծածկոցը պէտք է որ քիչ մը բարձր ըլլայ հողուն վրայէն և ամէն կաղմանէ լաւ պատսպարուած , որպէս զի ներս սառոյց չմննայ : Վայել ածուին վրայ զարկած միջոց՝ կրնայ վերցուիլ ծածկոցը , և երբոր արևեն անցնի նորէն գոցելու է . բայց թէ որ սառուցէ վախ ըլլայ գիշերն ալ բաց թողուլը վնաս ըրբերեր . միայն թէ ուշադիր ըլլալու է աս բանիս , վասն զի երկու ժամուան սառոյցը կրնայ բոլոր հունտերը փշացը . նել :

Երբոր այս հունտերը կը ծլին ու փոխադրուելու պատշաճ բարձրութեան կը հասնին , որ և իցէ տեղ կրնան տընկուիլ , միայն թէ հողը լաւ ըլլայ և տեղը աղեկ փորուած ու փափկացուցած : Տնկելէն անմիջապէս ետքը ջուր տալու է , և առջի ամիսները զրեթէ ամէն օր՝ եթէ յանկարծ հողը ցամքի ու ան-